ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2022թ. հոկտեմբերի 31-ին ստորագրված N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/64-Պ պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան 14-ը նոյեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

Անհատ ձեռնարկատեր Ֆելիքս Շախտոյանը, մյուս կողմից

(այսուհետ, յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

Հիմք ընդունելով Կողմերի միջև 2022թ. հոկտեմբերի 31-ին ստորագրված N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/64-Պ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5. կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի, 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝

ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը համաձայնեցին.

1. Պայմանագրի 1.2. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   1.1. «1.2. Կողմերն արձանագրում են, որ Կատարողը իր հաշվին ապահովում է հետևյալ տեխնիկական միջոցները (դրանց լրակազմը). Sony s3 – 9, SONY A74 – 7, Sony 70-200 – 6, SONY 24-70 – 9, Monitorner – 14, Tripod – 13, Signal + radio camera, crane Slider, camerwagen mechanique (Taylorenc) copy+ mechanique 2nd mechanique, 1 x 12kw + 2 x 9kw ARRI լույս 2 x 12kw ARRI լույս 1 x 5kw ARRI լույս:»:
2. Պայմանագրի 3.1. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   2.1. «Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 4 260 000 (չորս միլիոն երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:»:
3. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
4. Սույն Համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են Կողմերի միջև մինչև Համաձայնագրի կնքումը Պայմանագրով՝ 2022 թվականի նոյեմբերի 01-ից առաջացած հարաբերությունների նկատմամբ:
5. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
6. Պայմանագրի մնացած պայմանները տարածվում են սույն Համաձայնագրի վրա այնքանով, որքանով Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ:
7. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Ա/Ձ Ֆելիքս Շախտոյան

Ֆ. Շախտոյան